



**«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեռնագործների 18, հեռ. (+374 285) 3 31 31, էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեռնագործների 18,

Հեռ. (+374 285) 3 31 31,

Էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

Հաշվետվություն թիվ 30, 08.04.2022թ.

1) «Զանգեզուր Մայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիմել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերության կամ ԶՊՄԿ), «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի՝ հետևյալ պահանջներով.

ա) Պատասխանող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից վերցնել և հայցվոր «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով հանձնել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ձեռք բերված սեփական բաժնետոմսերը («Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ 2,061,253 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 20,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, ընդհանուր՝ 41,225,060,000 ՀՀ դրամ անվանական արժեքով)՝ հայցվոր «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից պատասխանող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին բաժնետոմսերի արժեքի գումարը (որը հաշվարկվում է որպես դրանց՝ նախորդ սեփականատիրոջից հետ գնման գին, կամ պետք է հաշվարկվի որպես շուկայական գին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով)՝ վճարելու պայմանով:

բ) Պատասխանողներ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին պարտավորեցնել «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից Պատասխանող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին բաժնետոմսերի շուկայական արժեքի գումարի վճարումը հավաստող փաստաթուղթը և հայցի բավարարման մասին վերջնական դատական ակտը ներկայացնելու դեպքում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ թողարկողի արժեթղթերի 715740000437 հաշվի 2,061,253 հատ բաժնետոմսերը փոխանցել «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ սեփական արժեթղթերի հաշվին:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.08.2021 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Գործին շնորհվել է «ՄԴ/0695/02/21» համարը:

2) «Զանգեզուր Մայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիմել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջով:

Հայցադիմումով պահանջվել է.

ա) Պարտավորեցնել պատասխանող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին չխոչընդոտել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներգրավված աուդիտորական ընկերության՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների անխոչընդոտ մատուցումը:

բ) Պարտավորեցնել պատասխանող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին ապահովել ներգրավված «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերության աուդիտորների և նրանց անձնակազմի անխոչընդոտ մուտք և ելք ունենալը պատասխանող ընկերության տարածք:

գ) Պարտավորեցնել պատասխանող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին ապահովել ներգրավված «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերությանը վերջինիս կողմից «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության ամբողջական ստուգման համար պահանջվող փաստաթղթերի տրամադրումը՝ ըստ աուդիտորական ընկերության կողմից տրամադրված ցանկի և ողջամիտ ժամկետում:

դ) Պարտավորեցնել պատասխանող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին ապահովել ներգրավված «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերության հետ ընկերության բոլոր աշխատակիցների ժամանակին պատշաճ համագործակցությունը, այդ թվում՝ ամբողջական, ճիշտ և հավաստի տվյալների և տեղեկությունների տրամադրումը:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2021 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Գործին շնորհվել է «ՄԴ/1766/02/21» համարը:

3) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը չի ընդունում ներկայացված հայցերը (պահանջները), ներկյացրել է հիմնավորված առարկություններ:

Նշված գործերը գտնվում են նախապատրաստական փուլում, գործերով վերջնական դատական ակտեր կայացված չեն, իսկ Ընկերության դիրքորոշմանը չհամապատասխանող դատական ակտեր կայացվելու դեպքում դրանք բողոքարկվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընկերության գնահատմամբ՝ ընդհանուր իրավասության դատարանում գործերի քննությունը կարող է տևել մինչև 2022 թվականի ավարտը: